

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ  
—  
ԱՌՋՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ  
  
Միա : (Տես երես 119)

Ո՞հոերուն էրենտ էրենցնէ առըստլը : —  
Ո՞րթուած կենդանեաց միսը այնչափ  
աւելի շուտ կ'աւրուի , որչափ օգոյն բա-  
րեխառնութիւնը բարձր ըլլայ և խոնա-  
ւութիւնը շատ : ( )զոյն թթուածնէն  
կը սկսի միսը խմորիլ , և փոտութեան  
հոտ մը այս խմորման յառաջագիմու-  
թիւնը կ'իմացընէ . այլ և այլ ձուածին  
կամ կենդանածին ձանձեր կու գան  
մախն վրայ իրենց հաւկիթը կամ ծե-  
տուկը կը դնեն , քիչ ատենէն բոլոր  
կ'օրդնոտի ու կ'ապականի :

Ծաեթև խմորման առաջին երեսովթ-  
ները մախն համակցութիւնը կը նուա-  
զեն կամ կը կակղացընեն . ուստի քանի  
մը կենդանեաց միսը այնչափ կը պա-  
հուին՝ որ ինչուան փոտութեան թեթև  
հոտ մը տայ , ու անկէ ետև կ'եփուին .  
այսպէս է փասխանի միսը : Ը ատ փոր-  
ձերով իմացուեր է որ այսպիսի միսերը  
ամենախն վնասակար որպիսութիւններ  
չեն առնուր , բայց կրնան նուազ սննդա-  
րար ըլլալ : Կընպէս ալ սաստիկ աշխա-  
տած ու յոգնած կենդանեաց միսն ալ  
էական անառողջութեան նշան մը չէ  
տուած :

Աւելի զարմանալին , հիւանդ  
կենդանեաց միսը , նոյն իսկ մահացու-  
ու փոխաղրական կամցեղական հիւան-  
դութեամբ բռնուած կենդանեաց միսը՝  
շատ անգամ թէ մարդիկ և թէ կեն-  
դանիք ուտելով ամենախն մէկ թունա-  
ւոր կամ մահաբեր արդասիք մը վրա-  
նին չեն զգացեր :

Կըեր է որ երբեմն խաղաւարք՝ ը-  
սուած հիւանդութեամբ բռնուած կեն-  
դանիք իրենց ախտաբեր թարախն հա-

զորդեր են մսագործին , որ զիրենք մնը-  
թեր է , և ամենախն վնաս մը չեն տուած  
անոնց , որ իրենց միսն եփեր են սովո-  
րական կարգաւ ու կերեր են :

Տարակոյս չկայ թէ այսպիսի միսերն  
այն ամէն որպիսութիւնները չունին , ո-  
րով սննդառութիւնն ախորժական կ'ըւ-  
լայ , և ոչ երբէք մարդ անոնց նախա-  
պատուութիւն կու տայ . բայց հարկա-  
ւոր է գիտնալ որ եթէ ըստ պատահման  
մէկն այսպիսի միս ալ կերած ըլլայ , ա-  
մենախն վտանգ մը չհանդիպիր :

Դաստիարակութեան էրենցնէ առըստած  
է գուած դիւրուն : — Իսինք թէ այն մի-  
սերն որ փոտութեան խմորման առաջին  
աստիճանն առեր են , կամ նոյն իսկ փո-  
խաղրական և պատուաստելի հիւան-  
դութեամբ բռնուած կենդանեացմէ  
յառաջ եկած ըլլան , շուտ մը եփուե-  
լով ու սպառուելով սննդառութեան  
մէջ ամենախն մահացու ազգեցութիւն  
մը չեն ըներ : Դաշտովին հակառակն է  
երբ եփուած միսերն իրենք իրենցմէ  
սկսին աւրուիլ . շատ փորձերով հաստա-  
տուած է որ այս միսերը երկար ժամա-  
նակ պահուելով , մանաւանդ խոնաւ և  
տաք օգոյ մէջ , մահաբեր որպիսութիւն-  
ներ կ'աւենուն : Ը յս որպիսութիւններս  
կարծել տուին թէ մետաղական ոքսիտ-  
ներէ կամ աղերէ յառաջ կու գան՝ անօ-  
թոց պղնձէ կամ կապարախառն բռով  
ծեփուած ըլլալուն պատճառաւ : Տա-  
րակոյս չկայ թէ այս ուտելիքները պէտք  
է զգոյշ բռնել այսպիսի թունաւորու-  
թեան պատճառներէ , այսինքն զանոնք  
պղնձէ կամ կապարախառն բռով ծե-  
փուած անօթներու մէջ չպահէլ . բայց  
առանց այս պատճառներուս և շատ ան-  
գամ առանց ամենախն մետաղական ոք-  
սիտի կամ աղի հետք մըն ալ գտնուե-  
լու , եփուած միսերն՝ որ աւրուեր եին՝  
ուտողաց վրայ թունաւոր երեսովթներ  
յառաջ բերեր են : Ը յս բանիս բռն  
պատճառը կը կարծուի թէ միսերուն  
վրայ գոյացած բորբոսն ըլլայ , որ հա-  
զիւ ազքի կը տեսնուի . վասն զի պա-  
րարտ հիւթը , որ արգանակին նման է ,  
գիւրաւ կրնայ թթուիլ և այս մանր

բոյսերս տալ, որ սունկերու նման են, որոնց մէջ շատ թռւնաւոր տեսակներ կան:

Ինչ ալ ըլլայ գլխաւոր պատճառը այսպիսի թռւնաւորութեանց, պէտք է միշտ, մանաւանդ տաք եղանակներուն մէջ, զգուշանալ եփուած հին միս ուտելէն՝ որ երկար ժամանակ օդուն մէջ մնացեր է, ու զգալապէս թթուեր է և շատ կամ քիչ բորբոսեր է: Դիւրին հնարքներ կան հում ու եփուած միսէրն երկար ատեն պահելու, որոնց վրայ կ'անցնինք խօսելու:

### ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Առողջարար և բերե բնակարանք:

Պ. 1 ակու, վաղեմի աշակերտ Շահիզու բազմարուեստից դպրոցին և կայսերական ճարտարապէտ կամրջաց և ճանապարհաց ու գլուխ ճարտարապէտաց հովվմէական երկաթուղոյն՝ ի Պոլոնեա, անցեալները հրովարտակ ընդունեցաւ Գաղղիոյ տէրութենէն գեղեցիկ գիւտի մը համար, որն որ մեծամեծ օգտակարութիւններ պիտի ընձայէ քաղաքաց և գիւղից հասարակաց առողջութեանը, ինչպէս նաև գիւրութիւն և խնայութիւն զինուորաց բանակելուն, և նոր յարգ մը պիտի տայ այնպիսի նիւթոյ մը, որն որ ինչուան հիմա ոչ յարգ ունէր, և ոչ ալ կարդաւորեալ գործածութիւն, և ամէն ծովեզերեայ տեղուանք առատապէս կը դտուի:

Վ.յս նիւթոյ է ծովու բարակ մամուռը, որ ինչուան հիմա ապակեղէն ու խեցեղէն անօթները զետեղելու կը գործածուէր: Վ.յս մամուռին վրայ եղած քննութիւններէն իմացուեցաւ որ անհաղղորդական է ջերմութեան, և հետևաբար թէ տաքին և թէ ցրտոյն հաւասարապէս կ'ընդդիմանայ. բաւական թանձրութեամբ խցերն յատակելով՝ կը պաշտպանէ, զանոնք աղմկաց դէմ:

գրեթէ անսկիզելի է, կամ գոնէ ամենեին բացովլ չվասիր, և երբ կրակն առնու զինքը՝ ինքնիրեն շուտ մը կը մարի ։ վերջապէս իր մասնաւոր յատկութենէն և վրայի ողորկութենէն միջատաց բնուկարան չկրնար ըլլալ:

Փայտաշէն տները ամառը տաքէն անքնակելի կ'ըլլան, և որչափ ալ ջանք ըլլուի հովանեցրնելու՝ գիշերներն անտանելի կ'ըլլան և բնակիչները տաքէն կը խղդուին: Չար քան զայս են զենուորաց բնակարանները, որ թէ վրանի տակ բնակին և թէ տնակներու մէջ ամառն ու ձմեռը շատ նեղութիւն կը քաշեն և հիւանդութեանց ենթակայ կ'ըլլան, մանաւանդ երբ այս տնակներուն տանիքը մետաղէ կամ նոյն խեկ կղմինտրէ ըլլան:

Ճալոր այս անպատեհութիւններս կը վերցուին՝ թէ որ արեուն Ճառագայթիցը դէմ խցերուն կամ տնակներուն տանեացը տակն այնպիսի նիւթոյ խիտ կարգ մը զրուի, որ անհաղղորդական ըլլայ ջերմութեան: Փայտածուին այս բանիս շատ լաւ կրնար ծառայել, բայց սուղ կ'ըլլայ. յարդն ու չոր խոտն այս անպատշաճութիւնն ալ ունին՝ որ գիւրավառ են, և բազմաթիւ միջատաց բնակարան կրնան ըլլալ, որոնք նոր տանջանք մը կ'աւելցրնեն բնակչաց վըրայ: Խսկ ծովու մամուռը համեմատութեամբ խոտին նուազ գին ունի, և ամէն ծովեզերեայ տեղուանք առատ կը գտուի. ուստի ամէն առաւելութիւն ունի այս անպատեհութեանցս դէմն առնելու: ( Ջրինակի համար, այս մամուռը անուշ ջրովլ լուալէն ետև կրնայ գեղի տանց կղմինտրներուն տակը դըրուիլ, որով այն տները թէ տաքէն և թէ ցրտէն կը պաշտպանուին. պատերն ալ կրնան անթափանցելի ըլլալ տաքութեան և ցրտութեան, եթէ մայր պատէն քիչ մը հեռու ուրիշ պատ մըն ալ շինուի զուգահեռական, և անոնց մէջ տեղը Ճնշած մամուռ զրուի: Վ.յս կերպով շատ կը լաւցուին ամառնային գիւղագնացութեան թեթև բնակարանները և ասոնց նման ուրիշ տները, որ